ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

2022-2024

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2022

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

ՀՀ կառավարության 2004թ. հուլիսի 22-ի № 1127-Ն որոշման 3 գ) կետի կատարման նպատակով՝ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի և ՀՀ դատախազության միջև ամենամյա կնքված պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրերի շրջանակներում 2019-2020 թվականների ընթացքում կազմակերպվել են փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների /նախաքննության, հետաքննության և այլ/ աշխատողների փորձագիտական բնագավառում մասնագիտական ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ, այդ թվում՝ արտագնա, որոնց ընթացքում վերապատրաստվել են ընդհանուր թվով 331 ունկնդիրներ: Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ դատախազության և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի միջև 11.02.2020թ-ին կնքված «Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման» № «ՀԳԴ-ՄԱԾՁԲ-20/4» պայմանագրի՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից 2020 թվականի ընթացքում պետք է իրականացվեր փորձաքննություններ նշանակելու և ելակետային տվյալների ձեռքբերման իրավասություն ունեցող 360 աշխատակիցների դատափորձագիտական բնագավառում մասնագիտական վերապատրաստման որակավորման բարձրացման դասընթացներ՝ սահմանված ժամանակացույցին համապատասխան, սակայն նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) համավարակի տարածմամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում 2020թ. մարտի 16-ից հայտարարված արտակարգ դրության իրավական ռեժիմով և մտցված սահմանափակումներով պայմանավորված, համապատասխան մարմիններից առաջարկներ չեն եղել, հնարավոր չի եղել սահմանված կարգով և ժամանակացույցով խմբեր ձևավորել և իրականացնել վերոգրյալ դասընթացները 2020 թվականի համար սահմանված ծավալով, որի արդյունքում համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազին և օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսավորման ծավալը նվազեցվել է և ՀՀ կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 7-ի N 1651-Ն որոշմամբ ծրագիրը թողնվել է 30 ունկնդրին համապատասխան, որն էլ ամբողջությամբ իրականացվել է:

Հարկ է նշել, որ դասընթացներն իրականացվել են ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի առաջատար փորձագետների, մասնագետների կողմից կազմված և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կազմակերպություն) գիտխորհրդի կողմից հաստատված ծրագիր-սեղմագրերի թեմաներով:

Կարևոր է նշել, որ յուրաքանչյուր տարի վերանայվում և ընդլայնվում է համապատասխան այն մարմինների և կառույցների ցանկը, որտեղից ընդգրկվում են ունկնդիրները: Այսպես, 2019-2020 թվականների ընթացքում պետական պայմանագրերի շրջանակներում վերապատրաստման (կատարելագործման) ուսուցողական դասընթացներ են անցել՝ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ոստիկանության, ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության, զորամիավորումների և զորամասերի, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ԱՀ ոստիկանության, ԱՀ քննչական կոմիտեի, ԱՀ արտակարգ իրավիճակների ծառայության լիազորություններ ունեցող ընդհանուր թվով 331 աշխատակիցներ:

Ստորև ներկայացվում են 2019-2021թթ. ընթացքում դասընթացներին մասնակցած ունկնդիրների վերաբերյալ ամփոփ տվյալները.

N	Տար եթիվ	Գիտաուսումնական աշխատանքների շրջանակներում իրականացված ուսուցողական դասընթացներին մասնակցած ունկնդիրների քանակային տվյալներն ըստ մարմինների													Ընդ.
		ՀՀ ԿԱ ՊԵԿ	ՀՀ ՊՆ	ՀՀ Ոստի-կանու-թյուն	ԱՀ Ոստի-կանու-թյուն	ՀՀ ՊՆ ՌՈ	ՀՀ ԱԻՆ	ԱՀ ՊՆ	ՀՀ Քնն. կոմի-տե	ՀՀ ԱՆ քրեական-տարո-ղական վարչու-թյուն	ՀՀ Դատախա զություն	ՀՀ ԱԱԾ	ԱՀ Քնն. կոմի տե	ԱՀ Արտա-կարգի րավիճ. ծառ	
1.	2019	-	54	108	20	21	-	-	20	22	23	8	23	2	301
2.	2020	-	-	-	-	-	-	-	21	-	-	9	-	-	30
3.	**2021***	-	95	120	25	25	-	-	20	30	30	15	-	-	360

***Տվյալներ, որոնք նախատեսվում են իրականացնել 2021թվականին:**

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2022-2024 թվականներին նախատեսվում է նոր կազմվող ծրագիր-սեղմագրերի կիրառմամբ կատարելագործել իրականացվող դասընթացները Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի իրավասու սպաների և ռազմական ոստիկանության իրավասու աշխատակիցների, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության դատախազության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության իրավասու աշխատակիցների,Արցախի Հանրապետության ոստիկանության ծառայողների, Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների, Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների ծառայության իրավասու աշխատակիցների, ինչպես նաև իրավապահ ոլորտի իրավասու այլ մարմինների աշխատակիցների համար:

Փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների /նախաքննության, հետաքննության և այլ մարմինների աշխատակիցների/ ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների առավել որակյալ կազմակերպման և իրականացման ապահովման նպատակով 2021 թվականի համար կազմվել են փորձագիտական տարբեր ուղղություններով և տեսակներով 24 թեմաից բաղկացած նոր ծրագիր-սեղմագրեր:

Կազմակերպության ուսումնակրթական բաժնի նախաձեռնությամբ համապատասխան փորձագիտական բաժինների փորձագետների, մասնագետների կողմից յուրաքանչյուր տարվա համար մշակվում են նոր ծրագիր-սեղմագրեր, որոնք ներկայացվում են Կազմակերպության Գիտական խորհրդի քննարկմանը և հաստատմանը, մասնավորապես՝ 2019 թվականին 19 ուղղություններով 24 թեմա, 2020 թվականին 19 ուղղություններով 24 թեմա, 2021 թվականի ընթացքում՝ 10 ուղղություններով 24 թեմաից բաղկացած նոր ծրագիր-սեղմագրեր: 2022-2024 թվականների ընթացքում նախատեսվում է մշակվել նոր ծրագիր-սեղմագրեր «Կենսաբանական օբյեկտների մեջ թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի և թունավոր նյութերի հայտնաբերման ու որոշման քրոմատո-մասս-սպեկտրոմետրիկ հետազոտությունների առանձնահատկությունները՝ ըստ հետազոտելի նմուշների տեսակների», «Մտավոր սեփականության օբյեկտների արժեքների պարզման առանձնահատկությունները և գնահատման արդյունավետ ուղիները», «Հայաստանի Հանրապետության տարածքի տարբեր բնակլիմայական և էկոլոգիական պայմաններում աճող հաճարի ցեղի ծառերի տարեկան օղակների համեմատական գնահատման առանձնահատկությունները դենդրոխրոնոլոգիական հետազոտության «LINTAB» LTM06-E սարքավորումային համալիրի կիրառմամբ», «Նոր սերնդի Լեյկա ապրանքային նշանի բարձր արագության 3D լազերային սկաների (Leica RTC360 3D Laser Scanner) և էլեկտրոնային տախեոմետրի կիրառմամբ փորձագիտական հետազոտությունների

իրականացման արդյունավետ ուղիները հողաշինարարական/շինարարատեխնիկական բնագավառի փորձաքննություններ իրականացնելիս», «Ավտոմատացված և նկարագրական մեթոդների կիրառման առանձնահատկությունները դիմանկարային նույնականացման բնագավառում», «Համակարգչային ցանցեր, համակարգչային ցանցերի տեսակները և հետազոտության առանձնահատկությունները» և «Դեպքի վայրի հետազոտման ժամանակից տեխնոլոգիաները և կիրառման առանձնահատկությունները» և այլն: Ընդ որում, կազմակերպվող դասընթացների նեղ մասնագիտական ուղղությունների ցանկը և ուսումնական ծրագրերը յուրաքանչյուր տարի վերանայվում են՝ հաշվի առնելով նորագույն գիտական նվաճումներն ու միջազգային առաջադեմ փորձը, ինչպես նաև հանցավորության շարժընթացները:

Կարևոր է նաև նշել, որ 2022-2024 թվականների ընթացքում դասընթացների առավել արդյունավետ կազմակերպման և անցկացման նպատակով, բացի ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան բաժինների բարձրակարգ մասնագետներից, գիտնականներից և փորձագետներից, նախատեսվում է ըստ անհրաժեշտության շարունակել ներգրավել նաև Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի (պոլիտեխնիկի), ՀՀ ոստիկանության ակադեմիայի, Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտի, ՀՀ ԱՆ դեղերի և բժշկական տեխնոլոգիաների գործակալության և այլ կառույցների պրոֆեսորա-դասախոսական կազմի ներկայացուցիչներին:

Նշենք նաև, որ դասընթացները պատշաճ որակով անցկացվում են համապատասխան դիդակտիկ նյութերի (այդ թվում նաև՝ էլեկտրոնային կրիչների վրա տեղադրված), ժամանակակից համակարգչային տեխնիկայի, անհրաժեշտ գույքի, գրականության, ինչպես նաև ուսումնական ձեռնարկների օգտագործմամբ՝ անհրաժեշտության դեպքում կարող են ձևավորվել և իրականացնել վերոգրյալ դասընթացները հեռավար եղանակով՝ պայմանավորված ՀՀ-ում նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) համավարակի տարածմամբ հայտարարված արտակարգ դրության իրավական ռեժիմով և մտցված սահմանափակումներով:

Ունկնդիրների յուրաքանչյուր խմբի համար կազմվում է դասավանդման հատուկ ծրագիր, ելնելով նրանց մասնագիտական ուղղվածությունից: Մասնավորապես՝ ոստիկանության համակարգի աշխատակիցների համար, բացի դասական քրեագիտական ուղղությունների դասավանդումից, շեշտ է դրվել նաև ավտոտեխնիկական, նյութագիտական (մասնավորապես՝ թմրամիջոցների), դատաբժշկական, տոքսիկոլոգիական, համակարգչատեխնիկական և այլ ուղղությունների վրա, իսկ պաշտպանության նախարարության իրավասու աշխատակիցների համար կազմակերպված դասընթացների շրջանակներում դասավանդման շեշտը դրվել է զինվորական հանցագործությունների, դեպքի վայրի հետազոտության և պահպանման, իրեղեն ապացույցների հայտնաբերման, ֆիքսման, առգրավման և փաթեթավորման առանձնահատկությունների և այլ կարևոր հարցերի վրա: Նույն մոտեցումներն են կիրառվել նաև այլ իրավասու մարմինների ունկնդիրների համար նախատեսված դասավանդման ծրագրերը կազմելիս:

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող

իրավասու մարմինների աշխատողների /նախաքննության, հետաքննության և այլ մարմինների աշխատակիցների/ ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում և իրականացում, նպաստելով վերոնշյալ համապատասխան իրավասու մարմինների աշխատողների փորձագիտական բնագավառին առնչվող անհրաժեշտ տեսական և գործնական գիտելիքների ձեռքբերմանը՝ քրեադատավարական օրենսդրության շրջանակներում նշանակվող դատական փորձաքննությունների ժամանակակից տեխնոլոգիական հնարավորությունների ճիշտ և լիարժեք օգտագործումն ապահովելու, ինչպես նաև տրված փորձագիտական եզրահանգումների պատշաճ իրավական գնահատում տալուն աջակցելու նպատակով:

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
Մասնագիտական ուսուցման և որակավորման բարձրացման կազմակերպում	ՀՀ կառավարության 22 հուլիսի 2004 թվականի N 1127-Ն որոշման 3-րդ կետի գ) ենթակետի պահանջների կատարում

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Հաշվի առնելով նշված գործընթացի շարունակական բնույթը, ինչպես նաև ելնելով այն նկատառումներից, որ սույն ծրագրի շրջանակներում մեր կողմից չի կանխատեսվում ունկնդիրների ընդհանուր քանակության աճ, 2021 թվականի համար նախատեսված 360 ունկնդիրների թվաքանակը 2022թ.-ի ընթացքում ըստ մեր կանխատեսումների, կմնա անփոփոխ, հիմք ընդունելով Լրացուցիչ կրթության ուսուցման գծով նախորդ տարիների ընթացքում իրականացված ծառայությունների վրա կատարված ծախսերը, ինչպես նաև հաշվի առնելով վերջին տարիների գնաճը (տնտեսական ծախսերի, կոմունալ վճարումների, գործուղման ծախսերի հետ կապված ուղևորափոխադրումների սակագների ու արտագնա, մասնավորապես ըստ պահանջի նաև Արցախի Հանրապետություն, ուսուցման կազմակերպման նպատակով գործուղումների քանակի ավելացմամբ և այլն):

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

Ունենալով նպատակ 2022թ.-ի ընթացքում շարունակել վերը նշված լրացուցիչ կրթության շրջանակներում իրականացվող ուսուցման գործընթացը՝ ապահովել բարձրորակ մասնագիտական ներուժով, նաև պահպանելով և զարգացնելով վերջինիս նյութական բազան, այդ թվում համալրելով նորագույն դիդակտիկ նյութերով, տեխնիկական սարքավորումներով և համակարգչային ծրագրերով, 2021թ.-ի համար կպահանջվի հետևյալ ֆինանսական միջոցները ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների.

«Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ձևավորման համար նախատեսվում է օգտագործել 2022թ.-ին՝ 10715.6 հազ.դրամ (առանց հաշվի առնելու առաջիկա տարիներին Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի փոփոխությունները): Վերջինս հաշվարկելիս հաշվի է առնվել դասախոսությունների տարեկան 9600.0 հազ. դրամ արժեքը (1 ժամվա նախատեսվող արժեքը 3000 դրամ x ընդհանուր առավելագույն ժամաքանակ՝ 3200 ժամ) և 1115.6 հազ.դրամ (ամսական միջին աշխատավարձ՝ 30.98հազ.դրամ x 3 աշխատակից x 12 ամիս) ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատավարձի ֆոնդը: Հարկ է նշել, որ նախատեսվող

10715.6 հազար դրամ գումարից պետական բյուջե վճարվելու է շուրջ 2759.48 հազար դրամի չափով եկամտային հարկ, սոցիալական և դրոշմանիշային վճարներ:

Ծախսերն ըստ **«Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ»** տնտեսագիտական դասակարգման հոդվածի կկազմեն համապատասխանաբար 2022թ.-ին՝ 10715.6 հազ.դրամ, 2023թ-ին՝ 10715.6 հազ.դրամ, 2024թ.-ին՝ 10715.6 հազ.դրամ (հարկ է նշել, որ յուրաքանչյուրտարի նախատեսվող 10715.6 հազար դրամ գումարից պետական բյուջե վճարվելու է շուրջ 2759.48 հազար դրամի չափով եկամտային հարկ, սոցիալական և դրոշմանիշային վճարներ):

«Նյութեր», այդ թվում «Գրասենյակային նյութեր» և «Այլնյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով Ուսուցման համար անհրաժեշտ դիդակտիկ նյութերի, գրասենյակային ապրանքների, ուսումնական պրոցեսի հետ կապված ծառայությունների, ինչպես նաև կոմունալծախսերի, այդթվում **«Էլեկտրաէներգիայի դիմաց վճարումներ», «Գազի դիմաց վճարումներ», «Այլ կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներ» և «Կապի ծառայությունների դիմաց վճարումներ»** տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ծառայությունների ձեռքբերման ծախսերը կկազմեն 2022 թվականին՝ շուրջ 2160.9 հազ.դրամ (հաշվի առնելով վերջին տարիներին տեղիունեցած գնաճը), 2023 թվականին՝ շուրջ 2160.9 հազ.դրամ, 2024 թվականին՝ շուրջ 2160.9 հազ.դրամ:

«Ներքին և արտասահմանյան գործուղումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով արտագնա դասընթացները կազմակերպելու նպատակով, նախատեսվում է 2022 թվականին՝շուրջ 300.0 հազ.դրամ, 2023 թվականին՝ շուրջ 300.0 հազ.դրամ, 2024 թվականին՝ շուրջ 300.0 հազ.դրամ:Վերջինս հաշվարկվել է կանխատեսվող ուղղություններով արտագնա դասընթացների վայրեր գործուղելու հետ կապված ՀՀ Կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ին ընդունված թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված գործուղվող աշխատողների ճանապարհածախսի, օրապահիկի և գիշերավարձի նվազագույն չափերով: Ինչպես նշվեց արտագնա դասընթացները նախատեսվում է կազմակերպել ՀՀ ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանումներում, ինչպես նաև ՀՀ ՊՆ զորամիավորումներում, զորամասերում և զինվորական հիմնարկներում, ըստ անհրաժեշտության նաև միաժամանակ երկու-երեք ուղղություններով՝ համապատասխան ղեկավարների առաջարկություններից ելնելով:

«Այլ ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածով, սույն ծրագրի պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով սպասարկման ծառայությունների՝ մասնավորապես փոստային ծառայության, բանկային ծառայության և այլ ծառայություն-ների ձեռքբերման նպատակով 2022թ.-ին նախատեսվում է 1044.6 հազար դրամ, 2023թ.-ին՝1044.6 հազար դրամ, 2024թ.-ին՝ 1044.6հազար դրամ:

«**Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ**» տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսվում է 2022 թվականին՝ շուրջ 2845.0 հազ.դրամ, 2023թ-ին՝ շուրջ 2845.0 հազ.դրամ, 2024թ-ին՝ շուրջ 2845.0 հազ.դրամ:

Անհրաժեշտ է նշել, որ տարեցտարի ավելանում են հանցագործությունների կատարման մեխանիզմներն ու հնարավորությունները, որի պարագայում նպատակահարմար է դասընթացների ամբողջական կազմակերպման համար ուսումնական պլանների մեջ ընդգրկել այդ առումով նոր թեմաներ՝ լրացուցիչ դասաժամերով (նաև տնտեսական հանցագործությունների կատարմանը վերաբերող թեմաներով, որոնց կատարման ընթացքում որպես գործիք օգտագործվում է փաստաթղթերի կեղծումը, շահումով խաղային ավտոմատների, հսկիչ դրամարկղային մեքենաների և այլնի ֆիսկալային հիշողությունների ոչնչացումը և այլն):

Հաշվի առնելով նշված գործընթացի շարունակական բնույթը, ինչպես նաև ելնելով այն նկատառումներից, որ սույն ծրագրի շրջանակներում մեր կողմից չի կանխատեսվում ունկնդիրների ընդհանուր քանակության տարեկան աճ, 2021 թվականի համար

նախատեսված 360 ունկնդիրների թվաքանակը 2022-2024թթ.-ի ընթացքում ըստ մեր կանխատեսումների, կմնա անփոփոխ:

Վերոնշյալ հաշվարկներից հետևում է, որ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 1144 ծրագրի 11001 միջոցառման դասիչով նախատեսված «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացման կազմակերպում» ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում պետական բյուջեից նվազագույնը ակնկալվում է ֆինանսավորում 2022-2024 թվականների յուրաքանչյուր տարվա համար՝ 17066.1 հազար դրամի չափով:

4.3. Նոր նախաձեռնությունները

2022-2024 թվականների ընթացքում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունում նախատեսվում է փորձագիտական նոր տեսակների և ենթատեսակների, հետազոտական մեթոդների և մեթոդիկաների ներդրում, գիտականորեն հիմնավորված նոր ուղղությունների մշակում և իրականացում, ինչպես նաև՝ նախատեսվում է կատարելագործել և զարգացնել նախորդ տարիներին ներդրված փորձագիտական տեսակները և ենթատեսակները, որոնք հիմնված են նորագույն տեխնոլոգիաների վրա, իրականացվելու են աշխատանքներ արդյունավետ /օպտիմալ/ փորձագիտական մեթոդիկաների և ժամանակակից բարձր տեխնոլոգիական սարք-սարքավորումների կիրառմամբ, որոնց վերաբերյալ ամբողջական անհրաժեշտ տեղեկատվությունը դասընթացների միջոցով փոխանցվելու է իրավասու մարմինների աշխատող ունկնդիրներին՝ տվյալ հնարավորությունների առավելագույն նպատակային կիրառումն ապահովելու համար:

Վերոգրյալով պայմանավորված նախատեսվում է մշակել և Կազմակերպության Գիտական խորհուրդի քննարկմանն ու հատատմանը ներկայացնել նոր թեմաներով ծրագիր-սեղմագրեր և դրանց շրջանակներում կազմակերպել և իրականացնել համապատասխան դասընթացներ:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրում համաչափորեն կներգրավվեն ՀՀ և ԱՀ իրավասու մարմինների տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչները՝ ըստ գերատեսչությունների ղեկավարների գրավոր առաջարկությունների և գերակայությունների:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացման կազմակերպում» ծրագրի կատարման գծով Կազմակերպությունը չունի:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Վերոնշյալ հաշվարկներից հետևում է, որ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 1144 ծրագրի 11001 միջոցառման դասիչով նախատեսված «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացման կազմակերպում» ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում պետական բյուջեից նվազագույնը ակնկալվում է ֆինանսավորում 2022-2024 թվականներիյուրաքանչյուրտարվա համար՝ 17066.1 հազար դրամի չափով:

Աղյուսակ N 1. Ոլորտի (համակարգի) ծրագրերի գծով 2022-2024թթ ծախսերի կանխատեսում

Ծրագրի դասիչը	Միջոցառման դասիչը	Ծրագրի անվանում	2021թ. հաստատված բյուջե	Կանխատեսում		
				2022թ.	2023թ.	2024թ.
		Ա	1	2	3	4
1144	11001	«Մասնագիտական ուսուցման և որակավորման բարձրացման կազմակերպում», այդ թվում	17066.1	17066.1	17066.1	17066.1
		Ընթացիկ ծախսեր	17066.1	17066.1	17066.1	17066.1
		Կապիտալ ծախսեր	0.0	0.0	0.0	0.0
Ընդամենը պարտավորություններ, որից			17066.1	17066.1	17066.1	17066.1
Ընթացիկ ծախսեր			17066.1	17066.1	17066.1	17066.1
Ընթացիկ կապիտալ ծախսեր			0.0	0.0	0.0	0.0

Տնօրեն՝ Ա. Հովսեփյան

Ֆինանսատնտեսագիտական բաժնի
պետ – գլխավոր հաշվապահ՝ Լ. Հայրապետյան

Ծրագրի հիմնավորումում նշված տեղեկատվության նախապատրաստման համարպատասխանատուներ՝ տնօրենի տեղակալ փորձաքննությունների գծով Ա.Գահնապետյան, տնօրենի տեղակալ ֆինանսական և տնտեսական հարցերի գծով Խ. Աբաջյան, տնօրենի տեղակալ գիտության գծով Պ.Ոսկանյան, ֆինանսատնտեսագիտական բաժնի տնտեսագետ Ա.Գրիգորյան:

Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՈԼՈՐՏԸ

Փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների /նախաքննության, հետաքննության և այլ մարմինների աշխատակիցների/ ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում և իրականացում դատափորձագիտական ոլորտում:

2022-2024 թվականներին նախատեսվում է նոր կազմվող ծրագիր-սեղմագրերի կիրառմամբ կատարելագործել իրականացվող դասընթացները Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի իրավասու սպաների և ռազմական ոստիկանության իրավասու աշխատակիցների, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության դատախազության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության իրավասու աշխատակիցների, Արցախի Հանրապետության ոստիկանության ծառայողների, Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների, Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների ծառայության իրավասու աշխատակիցների, ինչպես նաև իրավապահոլորտիիրավասու այլ մարմինների աշխատակիցների համար:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Հիմնական թիրախներն են՝ Փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների /նախաքննության, հետաքննության և այլ մարմինների աշխատակիցների/ ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպումը՝ իրավապահ համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

Անհրաժեշտ է նշել, որ տարեցտարի ավելանում են հանցագործությունների կատարման մեխանիզմներն ու հնարավորությունները, որի պարագայում նպատակահարմար է դասընթացների ամբողջական կազմակերպման համար ուսումնական պլանների մեջ ընդգրկել այդ առումով նոր թեմաներ՝ լրացուցիչ դասաժամերով նշված ժամանակահատվածի առավել արդիական փորձագիտական ուղղություններով:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնակրթական բաժնի նախաձեռնությամբ համապատասխան փորձագիտական բաժինների փորձագետների, մասնագետների կողմից յուրաքնչյուր տարվա համար մշակվում են նոր ծրագիր-սեղմագրեր, որոնք ներկայացվում են Կազմակերպության Գիտխորհրդի քննարկմանը և հաստատմանը, մասնավորապես՝ 2019 թվականին 19 ուղղություններով 24 թեմա, 2020 թվականին 19 ուղղություններով 24 թեմա, 2021 թվականին 10 ուղղություններով 24 թեմաից բաղկացած նոր ծրագիր-սեղմագրեր:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

<u>Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը</u>

Հաշվի առնելով նշված գործընթացի շարունակական բնույթը, ինչպես նաև ելնելով այն նկատառումներից, որ սույն ծրագրի շրջանակներում մեր կողմից չի կանխատեսվում ունկնդիրների ընդհանուր քանակության տարեկան աճ, 2021 թվականի համար նախատեսված 360 ունկնդիրների թվաքանակը 2022-2024թթ.-ի ընթացքում ըստ մեր կանխատեսումների, կմնա անփոփոխ:

Ունենալով նպատակ 2022-2024թթ.-ի ընթացքում շարունակել վերը նշված լրացուցիչ կրթության շրջանակներում իրականացվող ուսուցման գործընթացը՝ ապահովել բարձրորակ մասնագիտական ներուժով, նաև պահպանելով և զարգացնելով վերջինիս նյութական բազան, այդ թվում համալրելով նորագույն դիդակտիկ նյութերով, տեխնիկական սարքավորումներով և համակարգչային ծրագրերով, բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 1144 ծրագրի 11001 միջոցառման դասիչով նախատեսված «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացման կազմակերպում» ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում պետական բյուջեից նվազագույնը ակնկալվում է ֆինանսավորում 2022-2024 թվականների յուրաքանչյուր տարվա համար՝ 17066.1 հազար դրամի չափով:

Տնօրեն՝ Ա. Հովսեփյան

Ֆինանսատնտեսագիտական բաժնի
պետ – գլխավոր հաշվապահ՝ Լ. Հայրապետյան

Ծրագրի հիմնավորումում նշված տեղեկատվության նախապատրաստման համարպատասխանատուներ՝ տնօրենի տեղակալ փորձաքննությունների գծով Ա.Գահնապետյան, տնօրենի տեղակալ ֆինանսական և տնտեսական հարցերի գծով Խ. Աբաջյան, տնօրենի տեղակալ գիտության գծով Պ.Ոսկանյան, ֆինանսատնտեսագիտական բաժնի տնտեսագետԱ.Գրիգորյան: